

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԼԱՆ

### 1. Դրամական միջոցների պահանջ


Հոդվածներ		Սեփական կապիտալ	Դրամաշնորհ Կամ վարկ	Ընդամենը
Հիմնական միջոցներ`				
1	Հող			
2	Շենքեր, շինություններ			
3	Սարքավորումներ			
4	Արտադրական և տնտեսական գույք			
5	Տրանսպորտային միջոցներ			
6	Այլ			
Ընդամենը հիմնական միջոցներ				
Նախագործառնական ծախսեր				
Շրջանառու միջոցներ				
7	Նյութական պաշարներ			
8	Միջոցների առկայություն, այդ թվում`			
9	աշխատավարձի վճարման համար			
10	վարչական և արտադր. այլ ծախսերի համար			
11	իրացման ծախսերի համար			
12	վարկի և տոկոսների մարման համար			
13	Այլ (չնախատեսված ծախսեր և շահութահարկ)			
Ընդամենը շրջանառու միջոցներ				
Կապիտալի ընդհանուր պահանջ (ծրագրի արժեք)				
Ընդհանուր գումարը` արտահայտված %-ով				
Դրամական միջոցների պահանջ				

- **Ֆինանսական պլան** - ցանկացած բիզնեսի հիմքում ընկած է ֆինանսները և ֆինանսական պլանավորումը, առանց որի հնարավոր չէ պատկերացնել բիզնեսն առհասարակ՝ դա լինի ՓՄՁ, զուտ շահույթ հետապնդող կազմակերպություն, թե սոց. ձեռնարկություն, այդ շահույթն սոցիալական որևէ խնդրի վերացման մասով:
- **Հիմնական միջոց** - հիմնական միջոց է համարվում մեկ տարվա ընթացքում չմաշվող(չվերացող), 25,000 ՀՀ դրամից բարձր արժեք և մեկ արտադրական պրոցեսի ընթացքում չսպառվող առարկաները: Այստեղ կան հետաքրքիր օրինակներ՝ համակարգչային ծրագրերը, որոնք թեպետ առարկա չեն համարի, բայց հիմնական միջոց է եթե նրա համար բավական գումար եք վճարում «լիցենզավորված» ծրագրի ստանալու համար:
- **Սարքավորումներ** - սարքավորում է համարվում գույքի այն տեսակը, որոնք սնվում են էլեկտրականությունից(կարճ ասած կամ էլեմենտից, կամ էլ. հոսանքից):
- **Նախագործառնական ծախսեր** - նախագործառնական է համարվում այն ծախսերը, որոնք արվում են մինչև գործն սկսելը(այսպես ասած գործի կարմիր լենտը կտրելուց հետո, բոլոր այլ նախնական ծախսերը էլ նախագործառնական չեն համարվում այլ ընթացիկ ծախսեր):
- **Շրջանառու միջոցներ** - շրջանառու են կոչվում այն միջոցները, որոնք մեկ արտադրական ցիկլի ընթացքում վերածվում են ապրանքի կամ ապրանքին ապրանքային տեսք են հաղորդում ծախսվելով մասամբ կամ ամբողջությամբ այդ պրոցեսում:
- **Նյութական պաշարներ** - այս բաժնում կարող է լինել, թե կանխիկ գումարը, թե հումքը նախնական, արտադրության համար անհրաժեշտ այլ նյութեր:
- **Աշխատավարձը** պարզ է
- **Վարչական ծախսեր** - սա կարող է լինել ինչպես գրենական պիտույքների ծախս, այնպես էլ ադմինիստրատիվ ցանկացած ծախս(այստեղ բացառություն է ՍՊԸ, ՓԲԸ, ԲԲԸ և այլ կազմակերպությունների տնօրենների աշխատավարձը, որ այս բաժնում պետք է լինի)
- **Իրացման ծախսեր**- մարքեթինգային՝ գովազդին վերաբերող ցանկացած ծախս այս բաժնում է լինում
- **Վարկի և տոկոսի մասով** - ամսեկան վճարումներն են այստեղ ներառվում
- **Շահութահարկ** - շահույթից հարկում՝ կախված ինչ բզինես է 1,5-5 տոկոս վճար:
- **Ընդամենը շրջանառումիջոցներ** - գումարային բաժին է այստեղ ներառված, բոլոր նախկին բլոկների
- **Ընդհանուրը տոկոսներով** - վերոնշյալ թվերն այստեղ ներառված են տոկոսներով:
- **Դրամական միջոցների պահանջ** - Այստեղ ներառված է դրամով՝ գումարով նշված մասը բիզնես պլանի, թե որքան դրամ է պետք գումարային տեսքով այս բիզնեսը սկսելու համար:






## Իրացումից Մուտքեր



## Իրացումից Ելքեր



Այսպես ասած տակադի վերջում ինչ տարողություն մնաց, նոր բաժին է հասնում արտադրողին՝ բիզնեսով զբաղվողին: Ցանկացած բիզնեսի խնդիրն է որքան հնարավոր է քիչ ներդրումներով հասնել նրան, որ աջ մասում քիչ լինեն ծախսերը:

Այլ կերպ ասած գուտ-  
շահույթ/վնաս:

### 3. Շահույթ/վնասի հաշվարկ

Հաշվարկ	Հոդվածներ	Գումար
	<b>Իրացում</b>	
Հանած	Արտոնագրային վճար / շրջանառության հարկ	
=	<b>Ապրանքների (արտադրանքի) իրացումից զուտ հասույթ</b>	
Հանած	Աշխատավարձի ուղղակի ծախսումներ	
Հանած	Եկամտային հարկ	
Հանած	Ուղղակի նյութական ծախսումներ	
Հանած	Ուղղակի արտադրական այլ ծախսումներ	
Հանած	Անուղղակի արտադրական ծախսումներ	
=	<b>Իրացումիս ստացված համախառն շահույթ</b>	
Հանած	Իրացման ծախսեր	
Հանած	Վարչական ծախսեր	
Հանած	Նախագործառնական ծախսեր	
=	<b>Հիմնական գործունեությունից շահույթ/վնաս</b>	
+/-	Ֆինանսական գործունեությունից շահույթ/վնաս՝ ներառյալ տոկոսավճարները (ոչ գործառնական գործունեություն)	
+/-	Արտասովոր գործունեությունից շահույթ/վնաս	
=	<b>Շահույթ մինչև հարկումը</b>	
Հանած		
=	<b>Զուտ շահույթ/վնաս</b>	

Մինչ աղյուսակին անցնելը սկսեմ նրանից, որ մանրամասնեմ, որ վերոնշյալ աղյուսակը կազմվում է կամ ամսեկան կամ տարեկան կտրվածքով, հետևաբար և հասույթներն ու ծախսերը նույնպես տարեկան/ամսեկան կտրվածքով է տրվում:

- **Իրացում** - Վաճառված ապրանքի իրացումից հասույթն է՝ ամբողջ վաճառքից գումարը:
- **Շրջհարկ, արտոնագրային վճար** - հարկատեսակներ, թե որ հարկով է հարկվում տվյալ ընկերությունը՝ կապված թե ինչպիսի գործունեություն է և այլն:
- **Իրացումից զուտ հասույթ** - հավասար է ամբողջ իրացումից հանած հարկերը:
- **Աշխատավարձի ուղղակի ծախսեր** - բոլոր աշխատավարձերի գումարը հաշված տարեկան/ամսեկան կտրվածքով:

- **Եկամտային հարկ** - 2014-ի հուլիսից գործող հարկում է, որ տարածվում է 2014-ից բացված կազմակերպությունների աշխատակիցների և պետ. աշխատողների մասով՝ պարտադիր, մնացած աշխատակիցների համար արդեն՝ ըստ ընտրության:
- **Ուղղակի նյութական ծախսումներ** - հումքի տրված գումարը (էլի ամսեկան կամ տարեկան՝ կախված մեր աղյուսակի տեսակից):
- **Ուղղակի արտադրական այլ ծախսումներ** - ամորտիզացիան է ներառվում իր մեջ՝ հիմնական միջոցների մաշվածությունը վերոնշյալ ժամանակահատվածում:
- **Անուղղակի արտադրական ծախսումներ** - այն ծախսերն են, որոնք կատարման կամ հաշվարկման պահին հնարավոր չէ որոշել, թե այդ ծախսումների որ մասը որ արտադրատեսակին է վերաբերում: Այդպիսի ծախսումներ են արտադրական ստորաբաժանումների կառավարչական և սպասարկող անձնակազմի աշխատավարձը, դրանց սոցապ հատկացումները, արտադրական նշանակության հիմնական միջոցների մաշվածությունը, նորոգման և սպասարկման ծախսումներ (այս մասով շատ ընդլայնվեց բացատրությունը, բայց օրինակ կարող ենք բերել մի քանի բիզնեսով զբաղվող կազմակերպություն, ասենք կիսաֆաբրիկատների արտադրություն, որն արտադրության հետ մեկտեղ ունի նաև կից խանութ, և կոմունալի ծախսերը ներառելու համար, թե դա ուղղակի է, թե անուղղակի, այսինքն՝ ուղղակի արտադրության վրա ծախսված էլ. Էներգիան է, թե խանութի աշխատակցի տաքանալու համար հոսանքի ծախսը, եթե մեկ հաշվիչ է դրված արտադրամասում, մենք չենք կարող իմանալ եթե միաժամանակ են գործում երկու բիզնեսներն էլ. . . նման դեպքեր շատ են և անուղղակի ծախսով ցույց է տրվում տարբերությունը):
- **Իրացումից ստացված համախառն շահույթ** - այստեղ ներառված է հասույթից հանած բոլոր ծախսերը բացի իրացման, վարչարարական և նախագործառնական ծախսերից:
- **Իրացման ծախսեր** - այն ծախսերն են, որոնք վերաբերում են բացառապես վաճառքին՝ ապրանքի գովազդին, մի խոսքով մարքեթինգային ծախսերին:
- **Վարչարարական ծախսեր** - նախորդ բաժիններում արդեն մանրացրել ենք, բայց էլի կասենք. Ադմինիստրացիոն (գրասենյակային) ծախսերն են՝ սկսած գրենականով, ավարտած՝ տնօրենի աշխատավարձով (եթե ԱԶ- չէ իրավաբանական անձը):
- **Նախագործառնական ծախսեր** - նախագործառնական են կոչվում այն ծախսերը, որոնք կատարում է կազմակերպությունը(անհատը) մինչև բիզնեսը սկսելը:
- Աղյուսակի վերջին երկու կետերը այլ գործունեությունից **շահույթ/վնաս**, վերբերում է հիմնականում այն բիզնեսներին, որոնք բացի վերոնշյալ ծախսերը՝ նաև այլ ծախսեր ունեն՝ բիզնեսին չառնչվող, բայց, այսպես ասած, կոնկրետ ֆինանսական միջոցների վրա ազդող թվային տարբերակով ներառված: Այս իսկ պատճառով մեզ մոտ «Հիմնական գործունեությունից շահույթ/վնաս» համընկնում է «Շահույթ մինչև հարկումը» բաժնի հետ:

- **Չուտ շահույթ/ վնասի** հետ՝ սա էլ վերոնշյալի հետ է համընկնում «Շահույթ մինչև հարկումը», եթե իհարկե կազմակերպությունը ԱԱՀ (ավելացված արժեքի հարկով) չի հարկվում (իսկ ԱԱՀ-ով հարկվում են ՀՀ կազմակերպությունների մոտ 3-4 տոկոսը, հիմնականում արտահանմամբ զբաղվողներն ու սուպերմարկետների հետ աշխատող ընկերությունները):

Այստեղ փոքրիկ հավելում, որ Չուտ շահույթ/ վնասով նաև այս աղյուսակը ցույց է տալիս, արդյո՞ք արժե շարունակել, կամ ընդհանրապես սկսել տվյալ բզինեսը, թե ոչ: Այսինքն՝ արժե՞ այդքան ռիսկ/ չարչարանք և նյարդեր դնել այս գործի մեջ, թե ոչ:



#### 4. Հաշվեկշիռ

ԱԿՏԻՎ		ՊԱՍԻՎ	
<b>1. Ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>3. Սեփական կապիտալ</b>	
Հող և շինություններ		Կանոնադրական (հիմնադիր) կապիտալ	
Մեքենասարքավորումներ		Նպատակային ֆինանսավորում	
Արտադրական և տնտեսական գույք		Չուտ շահույթ	
Տրանսպորտային միջոցներ		Սեփական կապիտալի այլ տարրեր	
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		Ընդամենը սեփական կապիտալ	
Ոչ ընթ. կյութական ակտիվներ		<b>4. Երկարաժամկետ պարտավորություններ</b>	
Հա նա ծ Կուտակված մաշվածություն		Երկարաժամկետ վարկեր	
Չուտ ոչ ընթացիկ ակտիվներ		Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	
<b>2. Ընթացիկ ակտիվներ</b>		Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	
Հումք և կյութեր		<b>5. Կարճաժամկետ պարտավորություններ</b>	
Դրամական միջոցներ		Կարճաժամկետ վարկեր	
Անավարտ արտադրություն		Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	
Պատրաստի արտադրանքի մնացորդ		Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	
Դեբիտորական պարտքեր		Կրեդիտորական պարտքեր աշխատավարձերի գծով	
Այլ ընթացիկ ակտիվներ		Այլ ընթացիկ պարտավորություններ	
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ</b>		<b>ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՍԻՎՆԵՐ</b>	

## Անվնասաբերության կետ

Չաշվեկշռի մասով ընդամենը մի քանի կետ կարելի է նշել մնացածը կլինեն արդեն երկրորդ մասում օրինակների տեսքով՝

Նախ իրենից ինչ է ներկայացնում հաշվեկշիռը՝ դա ամենապարզ ձևով կարելի է բնորոշել կազմակերպությունը այսօր ու վաղը՝ այսինքն եթե մենք ուզում ենք կամավել կազմակերպության այսօրվա և մեկ տղարի հետո նույն օրվա դրությամբ հաշվեկշիռը թե ինչ փոփոխություն է եղել՝ պատկերացնենք մենք ունենք ֆոտոխցիկ և նկարում ենք այս պահի դրությամբ ընկերությունը և մեկ տարի հետո ընկերությունը: Արդյունքում փոփոխությունները համեմատում նկարներով: Սա ինչ-որ ձևով կարելի է համեմատել մեր՝ մանուկ ժամանակ խաղերից՝ գտեք 7 տարբերություն, խաղին, միայն թե այս դեպքում ոչ թե 7 տարբերություն է հենց, տարբերությունները կարող են հասնել ինչպես 15-20 այնպես էլ 1-2 տարբերության: Ինչպես նաև ինչպես լավ փոփոխություն վերոնշյալները կարող են հանդիսանալ, կարող են նաև վատ փոփոխություններ հանդիսանալ: Կարճ մեկնաբանելով կարող ենք ասել կազմակերպության պատկերն է ցույց տալիս հաշվետու ժամանակաշրջանում աճում է աճ է գրանցում թե հետզհետե մարում է կազմակերպությունը: Այստեղ պետք է նաև իմանանք, որ վերոնշյալ բոլոր 5 հասկացությունները պետք է նայել միյասին(4-ը վարկի մարման գրաֆիկն է, որ այստեղ չեմ ներառել, քանզի ամեն բանկային կառույցում դա իր տեսքն ունի): Եվ մեկն առանց մեկի կարելի է ասել թերի է ինչ-որ ինֆորմացիա մեզ տալիս է բայց հստակ դիրքորոշում այս կազմակերպության մասով չենք կարող կազմել:

- Անվնասաբերության կետ է համարվում այն չափման միավորը, որին հասնելուց հետո տվյալ ձեռնարկությունը սկսում է արդեն շահույթով աշխատել: Այն հաշվում են թե տարեկան թե ամսեկան թե շաբաթական, նայած թե ոնց է աշխատում տվյալ ձեռնարկությունը՝ աշխատակիցներին ոնց է վճարում օրեկան ամսեկան թե տոկոսային հիմունքներով: